Խ. ԴԱԴՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ

Խաչիկ Դադյանը (Դադյան Վահան Գրիգորի, 1863—1937?) ծնվել է Վարանդայի Զարդանաշեն գյուղում։ 1881 թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, զբաղվել է ուսուցչությամբ, եղել է Արցախի Խոթա, Ամարասի, սբ. Հակոբա վանքերի վանահայր։ Այդ տարիներին հավաքել է մի շարք ձեռագրեր, հայ և օտար լեզուներով վավերագրեր, փաստաթղթեր, ժողովրդագիտական նյութեր։ 1894 թ. Մկրտիչ Խրիմյանի հրավերով տեղափոխվել է Էջմիածին, իր հետ բերելով հարուստ ձեռագրական հավաքածու, որի ցուցակը երկու մասով տպագրվել է Էջմիածնում (1898—1900)։

1900 թ. Պետերբուրգի Կայսերական հնագիտական հանձնաժողովի թույլտվությամբ և Ամենայն Հայոց կաթողիկոսի համաձայնությամբ Խ. Դադյանը ձեռնամուխ է լինում Զվարթնոցի պեղումներին, որոնք որոշ ընդհատումներով տևում են մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Մասնակի պեղումներ է արել նաև Դվինում, Գառնիում։

Խ. Դադյանն ունի մի շարք տպագիր հոդվածներ Զվարթնոցի պեղումների, Արցախի, ինչպես նաև պարոկահայոց պատմության, տեղագրության, բանահյուսության և պաշտամունքային օջախների վերաբերյալ։

Խ. Դադյանը նամակագրություն է ունեցել հայ մշակույթի մի շարք գործիչների հետ (Դ. Խալաթյան, Գ. Աղանյան, Լեո, Վ. Փափազյան, Մ. Տեր-Մովսեսյան, Տ. Նազարյան և այլք), որոնց ինքնագրերը պահվում են ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվում (ՊԿՊԱ), Խ. Դադյանի ֆոնդ, 319։ Այդ ֆոնդից ստորև ներկայացվող նամակները հետաքրքիր նյութեր են պարունակում բանասիրության, հնագիտության և ճարտարապետության պատմության զանազան հարցերի վերաբերյալ։

ԱՎԱՆԴ ՂԱԶԻՑԱՆ

1

21 հոկտեմբերի, 1886 թ.
Մոսկվա

Հարգելի պարոն Վահան Դադյան
Ի Շուշի

Թեև անծանոթ ինձ անձամբ՝ բայց ավելի բարի համբավներից տեղյակ Ձեր բարեմասնությանց—դիմում եմ ահավասիկ առ Ձեզ մի խնդրանք, որ հուսամ թե անտես անելու չեք։

Մոսկվայի համալսարանի տաղանդավոր ուսանող Եղիշե Մադաթյան՝ այցելության գալով այս ամառ յուր հայրենիքին, յուր վերադարձին մեծ հետաքրքրությամբ էր պատմում ի թիվս այլոց Ձեր հավաքած ժողովրդական գրականության վերաբերյալ նյութերի մասին և մանավանդ, որ մեծ պատիվ է բերում Ձեզ ու մխիթարություն և ուրախություն մեր հայրենյաց հնությունքը գնահատողներին,— այն պատվական գրչագրաց ժողովածուի մասին, որոց մեջ կան արդեն մի քանի շատ հետաքրքրաշարժ օրինակներ և որոց թիվը առավել հազվագյուտ օրինակներով ավելացնելու համար ոչինչ չանք և աշխատություն չեք խնայում։ Այսպես, պ. Մադաթյանի ասելով՝ արժանի են ուշադրության—Աղվանից պատմությունը, որ թվի լինել ընդարձակագույն, քան տպագիր օրինակը, Սամուել Անեցու ժամանակագրությունը, Խորենացու Աշխարհագրությունը, անծանոթ տառերով մի գրչագիր և այլք։ Բայց մանավանդ գրավել էր նորա ուշքը և միտքը Շապուհ Բագրատունու Պատմությունը.

որ թե Ձեզ հաջողի ձեռք բերել՝ Ձեզ կամ ուրիշի համար—այդ միևնույն է, կարելի էր անմիջապես ի լույս ընծայել՝ հանակնկալ ուրախություն հայ գիտնականաց, հավերժացնելով և Ձեր անունը հայ պատմական գրականության մեջ։

Նախ իմ խնդիրս առ Ձեզ այս է.—ուղարկել ինձ, թե բարեհաճեք, Ձեր ժողովրդական նյութերը, որք թե լույս տեսնին՝ անտարակույս իրենց հեղինակի անունը կպահպանեն միշտ։ Այդ մասին կարող եք բոլորովին հանգիստ լինել։ Հակառակ դեպքում ամբողջությամբ կվերադարձվին տիրոջը։

Երկրորդ՝ ուղարկել ինձ՝ թե հարմարավոր տեսնիք, Ձեր գրչագիրներից մի քանիսը ժամանակավորապես ի քննություն՝ անշուշտ ճանապարհի ծախքը իմ հաշվիս դնելով, և մանավանդ Շապուհ Բագրատունու Պատմությունը։ Իսկ թե տակավին գնած չեք այդ գրչագիրը, պ. Մադաթյանին Ձեր հիշած գնից կրկնակի և եռակի ես ինքս պատրաստ եմ վճարել, միայն որ հնար լիներ ձեռք բերելու և դորանով թե փրկել նորան անդառնալի կորստյան վտանգից և թե, ինչպես ասացի վերը, Ձեր միջոցով մի գեղեցիկ ընծա պատրաստել գիտական աշխարհին վայելուչ հրատարակությամբ։

Սպասելով այս կետերի մասին Ձեր որոշ պատասխանին, մնամ միշտ Ձեր բարյացակամ և պատրաստ ի ծառայություն՝ Գր. Խալաթյանց[2]

Բղթ. 232, էջ 1

2

4 հունիսի, 1893 թ.
Տիֆլիս

Շնորհունակ ճ. Վահան սարկավագ Դատյան
Հարգելի եղբայր ի տեր

Եթե չեմ սխալվում, մենք վաղուց արդեն ծանոթ ենք, ուստի վստահանում եմ ուղղակի դիմել Ձեզ հետևյալ խնդրով.

Անշուշտ լսած, թերևս և լրագիրներում կարդացած կլինիք, որ ես պատրաստում եմ հրատարակության համար մի ընդարձակ գործ՝ Սիմեոն կաթողիկոսի[1] օրագիրը նորա կենսագրությամբ ու քանի մի անհրաժեշտ նկարներով։ Եվ որովհետև, որքան ինձ հայտնի է, Դուք ձեռագիրների և այլ հնագիտական մեծ ժողովածու ունիք, ցանկալի էր ինձ իմանալ, արդյոք չկան նոցա մեջ հետևյալ տեղեկությունները.—1. Սիմեոն կաթողիկոսի պատկերը, 2. Սիմեոն կաթողիկոսին վերաբերյալ որևէ տեղեկություններ, 3. ԺԸ դարու վերջին կիսի վերաբերյալ որևէ հետաքրքրական պատմություն կամ նկար, որ կարելի լիներ մտցնել այս գործի մեջ, 4. Սիմեոն կաթողիկոսի որևէ կոնդակ, 5. մասնավոր կամ պաշտոնական գրագրություններ կամ տեղեկություններ Սիմեոն կաթողիկոսի ազգաբանության մասին, 6. Պոռշ իշխանի տոհմի մասին որևէ նոր տեղեկություն, 7. Գանձասարի կամ Աղվանից ԺԸ դարու կաթողիկոսներից որևէ մեկի լավ կամ վատ պատկեր։ Եվն։

Մեծ հույս ունիմ, որ Ձեզ մոտ գտնված բոլոր տեղեկությունները վերոհիշյալ նյութերի մասին շուտով կհաղորդեք ինձ և եթե մանրամասն գրել բոլորը կարելի չէ՝ կուղարկեք այդ դեպքում իսկականները, որոնց անկորուստ և ապահով պահպանության համար որպես երաշխավոր ներկայացնում եմ իմ և Ձեր հարգելի բարեկամ պ. Արսեն Կրասիլնիկյանցին[2]։

Հուսալով, որ ընդ փութ խնդիրս կկատարեք։ Մնամ Ձեզ միշտ հարգող՝
Գյուտ քահ. Աղանյան[3]

Բղթ. 237, էջ 1

3

14 Նոյեմբերի, 1900 թ.
Մոսկվա

Սիրելի Խաչիկ հայր-սուրբ

Գործունեությունդ և գյուտերդ շատ մեծ ուրախություն պատճառեց ինձ. գիտեի և կրկնում եմ, որ ամբողջ էջմիածնի միաբանությունն արժես քո աշխուժովն ու գործերովդ։ Այնքան ուրախ եմ, որ... պատմության մեջ անուն պիտի թողնես, երևան հանելով 7-րդ դարու այդ հրաշալի եկեղեցին[1]։

Այսօր քո պատկերը և եկեղեցվո սյունի վրա քանդակած արծվի լուսանկարը ուղարկեցի Վենետիկ (Եսայի սարկավագից[2] առի), որ տպեն «Բազմավեպի» մեջ։

Իսկ քեզնից ես մի բան եմ խնդրում և հույս ունիմ որ կկատարես։

Մոսկվայի հայ ուսանողները նոր տարվա սկզբներին մի գրական մեծ ժողովածու են հրատարակելու հօգուտ որբերի. խմբագիրը ես եմ և թե՛ նրանց ու թե՛ իմ կողմից խնդրում եմ քեզ մանրամասն նկարագրել գյուտիդ պատմությունը, պեղման առաջին օրերից սկսած։ Լսել եմ որ օրագրություն ես պահում. լավ չի՞ լինիլ եթե այդ օրագրությունից քաղելով մի բան կազմես և ուղարկես մեզ տպելու։ Շատ պարզ և հասարակ կերպով պատմիր, թե ինչպես սկսեցիր, ի՞նչ ջանքեր գործ դրիր, ի՞նչ հետևանքների հասար հետզհետե և ինչեր գտար։

Տես, հայր սուրբ, ուզում եմ որ այդ դու անես, ապա թե ոչ Եսայի սարկավագը խոստանում է գրել, եթե դու չգրես։ Ես քեզ հատուկ խնդրում եմ որ գրես. մինչև կես տպագրական թերթ կարող ես գրել. գիտական բան պետք չէ, այլ լոկ նկարագրություն քո սկսելուն և պեղման հետզհետե եղող արդյունքների մասին։

Քեզ ժամանակ մինչև դեկտեմբերի 20-ը և հույս ունեմ, որ իմ և ուսանողության խնդիրը չես մերժիլ։

Այսպես ուրեմն, կսպասեմ և սեղմում եմ քաջ ու աշխատավոր ձեռքդ։

Բարևս Կորյուն, Կոմիտաս հայր սուրբերին։
Բարեկամաբար՝ Վ. Փափազյան[3]։

Իմ հասցեն՝ Москва, Большой-Чернышевский пер., дом Келлера, кв. № 12.

Հ. Գ.

Երկու ամսից ի վեր այստեղ եմ և երևի մի քանի տարի կմնամ, որովհետև մտադիր եմ ատամնաբուժություն սովորիլ, ապագայում մի կտոր ուտելու հաց ունենալու համար։

Գրիր ինձ մանրամասն քո մասին. ուրախ կլինիմ։

Նույն

Միքայել վարդապետի[4] համար լավ լուրեր եմ լսում. խնդրեմ նրա մասին էլ լուրեր հաղորդիր ինձ. ես հույս ունիմ, որ նա էլ Անիում գործ կտեսնի։

Թղթ. 248, էջ 1—2

4

20/7 սեպտեմբերի, 1901 թ.

Հասցեն՝ M. Michaelian
Via Tomacelli 147
Roma (Halia)

Վերապատվելի Խաչիկ վարդապետ
Ի Վաղարշապատ

Վ—հայր.

Ինձ հայտնի է, որ Դուք Մայր աթոռույս թանգարանապետի պաշտոնն եք վարում, ուստի այդ առթիվ այս երկուտող նամակը վերապատվելի անձիտ եմ ուղղում, բայց ուրախալի կլիներ եթե սա Ձեզ նեղություն չպատճառեր.

Վերապատվելի հայր,
այս նամակիս հետ ուղարկում եմ մի կտոր լուսանկար. դա իմ ձեռագործն է, որ 1900 թ. սկզբներին պատրաստել եմ Անդրկովկասում՝ Արաքսի մոտ, դա ներկայացնում է «Ջրի գնացող հայ աղջիկ». դա ընտիր և շատ գեղարվեստագետների գնահատած դործ է, մի խոսքով ինձ չի պատկանում տորան երկար գովելու և այլն։

Տորա արկինալը* ես կամենում եմ նվիրել Մայր աթոռույս թանգարանին, որի բարգավաճման և տեսնելույս փափագս անսահման է։ Բայց վերապատվելի հայր, սորա արկինալը կավից է (гипс), իսկ կավը մի հիվանդ մարմին է...

Մանավանդ այդպիսի ընտիր թանգարանին ու այդպիսի աջող բանը, վայել կլիներ, որ նա բրոնզյա լիներ, բայց թշվառ ու ողորմելի միջոցներս թույլ չեն տալիս որ նորան ես բրոնզից ձուլել տայի և ուղարկեի ազգիս համակրելի թանդարանին։

Ուստի սորանով կամենում եմ խորհուրդ տալ վերապատվելի անձիդ, որ եթե թանգարանը կտա նորա բրոնզից ձուլելու միջոցը, այսինքն (35 ռուբլի) երեսունհինգ ռուբլի, 30 ռուբլի բրոնզից ձուլելու վարձը, այն 5 ռուբլին էլ ճանապարհածախսը, այս գումարը մի շատ չնչին բան է և ես բոլորովին հուսով եմ, որ չեք մերժիլ, նորա պատճառով եմ այժմ ձեզ նամակ գրում այստեղից սորա մասին, որովհետև այստեղ շատ էժան են բրոնզից ձուլում։ Եթե կբարեհաճիք այս առաջարկությանս, այն ժամանակ շուտով պատվեր կտամ տորան բրոնզից ձուլելու և կուղարկեմ այդտեղ, եթե չեք համաձայնիլ իմ այս առաջարկությանս, այն ժամանակ առաջիկա տարվո վերջերին գուցե Կովկասից ուղարկեմ տորա կավի արկինալը։

Իհարկե ես ամոթապարտ եմ մնում Ձեր առաջ այսպիսի առաջարկությամբ, բայց ինչ արած, վերապատվելի հայր, որ գրպանումս թշվառություն է բնակվում, իսկ հոգուս մեջ հարստություն, բայց այս աշխարհում առաջինը ամեն մի կերպ հաղթում է... ու դուք չպիտի նեղանաք ու մեղադրեք նամակս ընթերցանելուց....

Միքայելյան։

Թղթ. 254, էջ 2

5

24 սեպտեմբերի, 1901 թ.
Halle, Krausen str., 22

Սիրելի Ե. Խաչիկ

Իսկի ձայն ու ծպտուն չեք հանում։ Գիտությամբ, պեղումներով զբաղվող մարդը հոգուտ յուր և գիտության ավելի շատ շարժունություն պետք է ցույց

* Օրիգինալը։

տա։ „Kölner Zeitung"-ում մի կաթոլիկ խոսել էր Ձեր պեղումների մասին։ Հայտնի սեմիտագետ, պրիվ[ատ] դոցենտ Լեհմանը[1] այժմ պատրաստում է մի ընդարձակ ուսումնասիրություն այդ արձանագրության մասին իմ աշխատակցությամբ, որը մինչև գալ տարվա սկիզբը կհրատարակվի Հալլեում հրատարակվող „Zeitschrift S. D. M. Gerellschaft" ամսագրի մեջ։

1) Գտնված ջրանցքը կամ Canal-ը Հրազդանի, թե Քասաղի ուղղությամբ է ընկած. ճշտիվ որոշումն ուղղության։ 2) Ի՞նչ քարից է շինված կանալը, քարի անունը, արդյո՞ք այնտեղ շատ կա այդ հանքից և ի՞նչ նպատակով գործածական։ 3) Ջրանցքը այժմ գործածակա՞ն է։ 4) Այնտեղ չեմ կարծում որ որևիցե մեկը իմանա, թե ինչպե՞ս էր կոչվում Իգդիրը հին դարերում։

Եթե բառարանի կամ խոստացած փողն ևս չուղարկեք, խնդրեմ բարեհաճեցեք այս հարցերին որքան կարելի է շուտով պատասխանել, որովհ[ետև] հրատարակության ժամանակը կախված է Ձեր պատասխանից. բարևներով՝

Ձեր Հ. Թոփճյան[2]

Ողբ. 242, կ 5

6

29 սեպտեմբերի, 1902 թ.
СПб., Большая
Конюшенная, № 19

Հայր Խաչիկ!

Ամսիս 20-ին գիրքս՝ «История перевода Библии на армянский язык», տպվեց վերջացավ, արտաքուստ շատ շքեղ հրատարակություն է։ Դեռ մայիսին պր. Վեսելովսկին[1] Մառի միջոցով ինձ խնդրել էր քո պեղումների մասին հոդված գրել։ Ամառս ազատ ժամերում քաղել էի պատմական տեղեկություններ և երեկ վերջացրի այդ հոդվածը։ Բավականի[ն] հարցեր մնում են անլուծանելի և այդ պատճառով քեզ եմ դիմում, խնդրելով հաճիս պատասխանել իմ հետևյալ հարցերին։ I 1. Քո նկարած հատակագիծը ունի խոշոր թերություններ ա. չեն նշանակված արտաքի[ն] պատի աստիճանները. բ. արևելյան քառանկյունի եկեղեցուն կից շինությունը նշանակված է միացած, ի մի ձուլված եկեղեցու շինության հետ, մինչ լուսանկարի մեջ նա առանձին է կանգնած, կարծես կպցրած է, գ. պարզ չէ, [թե] եկեղեցու ներսի չորս սյուները ինչպես են միացած եղել եկեղեցու պատի հետ—պատի համապատասխան թաղկապների փոխարեն հարավից և հյուսիսից դռներ են բացված, որ խիստ անսովոր և անհասկանալի է, դ. հինգ դռնից որ[ն] է եղել գլխավոր մուտքը, բոլորը միթե իրար հավասար են։

Սիրելիս, ի սեր քո կատարած մեծ աշխատության, Երևանից բեր պ. Միրզայանին[2] և թող գիտակ ձեռքով նկարի բոլոր շինությանց պլանը և ինձ ուղարկիր։ Ինձ համար ցավալի է ցույց տալ մեր տգիտությունը այն դեպքում, երբ իսկական տգիտություն չկա, այլ կա անհոգություն։ Ճեմարանի աշակերտի նկարը չի կարող պլան համարվել։

2. Գրիր. ա) որքան են քո աղավնիների (ոչ արծիվների) մեծությունը՝ բարձր, հաստ, լայն, մետրաչափով և արշինաչափով. բ) որքան են քո գտած խոյակների թիվը, նոցա մեծությունը. դոցանից որն է ավելի մեծ. քանիսի վրա կա կաթողիկոսի անունը և քանիսի վրա խաչ, հաշված նաև ճեմարանի առաջ եղածները. գ) որքան է սյուների հաստությունը, բարձրությունը և արդյոք նոքա մի քարից էին, թե մի քանի կտորից երկաթով կամ որևէ կերպ միացած. դ) ինչ դրությամբ են գտնվել. ե) պատին կպած ներքին սյուների՝ 164, հեռավորությունը[ը] միմյանցից։

3. Դրսի պատերի օրնամենտները, նաև շուշան, խաղող, անկյունի սրբեր կամ մարդու բարձրաքանդակը, կոլոր վահանանման զարդեր, անկյունավոր, դռների կամ պատուհանների գլուխներ շատ ցանկալի էր առանձին նկարել.

որ այստեղ հատուկ կլիշաներ պատրաստենք։ Անհրաժեշտ է գրել նոցա մեծությունները, նաև ժամացույցի քարի մեծությունը։

4. Ուշադրությամբ քննել, արդյոք եկեղեցին դրսի կողմից իսկապես կոլոր է, թե բազմանկյունի, որոնց օրինակը շատ սովորական է։

5. Արդյոք չես գտել Ներսես կաթողիկոսի[3] գերեզմանը, որը ըստ Հովհան կաթողիկոսի՝ «իջաւ մարմին ի հանգստարանի Տէր, զոր իւրովի իսկ յօրինեալ էր ի հիւսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին» (Մոսկվա, 1861, էջ 52) և արդյոք արևելյան կից շինությունը չէ այստեղ հիշված «հանգստարանը»։

6. Եթե պեղումների համար օրագիր ունիս պահած, գրիր թե երբ ես գտել սնպագիր արձանագիրը, երբ խոյակները, աղավնիները. երբ մոզաիկ խաչը և որ գլխավորն է, որ մասեռում։ Օրինակ, լուսանկարներում մոզաիկ խաչը տրված է սեղանի վրա. լուսավորչի մասունք գզրոցի վրա հենված։ Անհնար է, որ այդ լինի նրա սկզբնական տեղը, երևում է հետո են դրել, ընկել այնտեղ։ Արդյոք խաչը գոգավոր չէ, օրինակ, չէր կարող նա գմբեթի մեջ լինել և այնտեղից վայր ընկնել. կա՞ն խաչի վրա ճառագայթներ։ Խաչի մեծությունը։

7. Գրիր գզրոցի մեծությունը և եթե գտար նկարիչ, նկարել տուր, ցույց տալով, թե նրա որ կողմիցն է եղել մասունքը ներս ու դուրս հանելու դուռը։

8. Գրիր ավազանի մեծությունը և հայտնիր արդյոք նա հարմար չէր հասակավոր մարդկանց մկոտության համար. օրինակի համար, եթե կիսով չափ կամ մինչև ծնկները մեջը կանգնեին։

9. Ալբոմիդ մեջ մի նկարված խաչ կա. լավ կլինե նրան նկարել տուանց ռեստավրացիայի, ցույց տալով, թե որտեղ է գտնվել։ Կլինեն հարցեր, որ ես չեմ իմանում, ինքդ այդտեղ ես, բավական ուսումնասիրել ես, կարող ես քեզնից ավելացնել։

10. Իմ կարծիքով եկեղեցին արաբները (տաճիկք) չեն կործանել, այլ քանդվել է բնական պատճառներից, օրինակ, խոյակների վրա, աղավնիների վրա, սեղանի վրա, ավազանի վրա ևն չեն երևում մուրճի հարվածներ, բռնի քայքայման հետքեր։ Խնդրեմ ստուգիր առտեղավն իմ ենթադրությունը և գրիր քո կարծիքը, շատ կարևոր հարց է, որով շատ բան կպարզվի։

11. Ի՞նչ է պատահել Լուսավորչի մասունց հետ, մի բան չգիտենք։

II 1. Նկարել կաթողիկոսարանի շինության պլանը։

2. Քո բնակ[ար]ան՝ թանգարան, մասունց խորան, ծառաներիդ կացարան, թոնրատան պլանը, ամեն անգամ նշանակելով պատերի, քարերի հաստությունը, մեծությունը. հաջորդ շինությունները ինչպիսի կտուր ունեն, տափակ, թե կամարներով. նոցա կտուրը եկեղեցու բակ չէր կազմում։

3. Կաթողիկոսարանը ինչպես է ընկած, ինչ հեռավորությամբ եկեղեցուց։

III 1. Որտեղ ես գտել հունարեն արձանագրությունը, որտեղ հայերենը. վերջինիս տառերը գրիր ինձ, նոցա մեծությունը։

2. Որ պատերի վրա էին փոքր արձանագրությունները, գրիր որքան կարդացել ես. ի՞նչ ես կարծում, երբ են գրվել, եկեղեցին քանդվելուց հետո, թե առաջ։

3. Կարասները են որտեղ են գտնվել։

4. Ես դիտմամբ քո արծիվները աղավնի եմ կոչում, նոցա ոտների վրա չկա մագիլներ, հին եգիպտական և իտալական եկեղեցիներում սովորական են աղավնիներ և ոչ արծիվներ, ուրեմն առտեղավն ուշադրությամբ քննիր և գրիր քո կարծիքը։

Գրած հոդվածս բավական մեծ է, նկարները հաշված հարյուր երես, հարցերից նկատում ես, որ ուշադրությամբ ուսումնասիրել եմ քո գործը։ Նորից ինդրում եմ նպաստիր մի վայելուչ աշխատանք հրատարակելու, որից միակ հարմար տեղը այստեղ է, ուր մեծ թվով աղբյուրներ կան և մարդիկ, որ պատրաստ են օգնելու և ցուցմունքներ տալու։ Բայց գլխավոր պայմանը շուտ գրիր։ Ես այստեղ երկար մնալու չեմ։ Պրոֆեսոր Մառը մինչև 10 օր այստեղ կլինի։ Ես շուտով կպաշտպանեմ դիսերտացիաս և կվերադառնամ Էջմիածին։ Քո հոդվածից հետո սկսելու եմ գրել պաշտպանողական ճառս։

Եթե նամակումդ մի քանի բան էլ Էջմիածնից գրես, շատ գոհ կլինիմ, որտեղից ամիսներով ոչ մի լուր չունիմ։ Երեկ Կարդացի Արարատը։ Կարապետ վրդը[4] նորից տաքացել է, կարծում էի ժամանակ է վերջապես հասուն լինել և առանց առիթի խուլս տալ հրապարակավ միմյանց վիրավորել։ Նա Լեոի հետ հաշիվներ ունի, մի՞թե այդ նրան իրավունք է տալիս Մեսրոպ վրդին վիրավորելու։ Սրտանց ցավում եմ և իրան ասա, որ մտադիր չեմ նրա շավղին հետևելու։ Վերջապես ժամանակ է իբրև հասունացած մարդիկ իրար հանդեպ կանգնելու և առիթ որոնելու իրար հարգելու և ոչ թե անտեղի վիրավորելու։ Ուրախ եմ, որ նրան են հանձնել Աստվածաշնչի տպագրության գործը։ Իմ գիրքը կարծեմ օգտակար կարող է լինել նրան։

Մեսրոպ վրդ[5].

Նամակս ծալելուց հետո միտս ընկավ։ Թալիշի (Արուճ) եկեղեցին շինել է նույն Գրիգոր Մամիկոնյանը, որ փոխադրել է Լուսավորիչի նշխարները ու շինությունը սկսել է Ի և Թ Կոստանդնի թագավորության տարին. անմիջապես Զվարթնոց եկեղեցուց հետո, չե՞ս կարող նրա լուսանկարը ինձ ուղարկել, Ունիմ Թալինի եկեղեցու նկարը, որ շինված է Զվարթնոցի հետևողությամբ, նույն նկարներով, ցանկալի է ունենալ նաև Արուճի եկեղեցվո նկարը։

Թղթ. 256, էջ 1—2

7

18/5—I, 1914 թ.
Վիեննա

Արժանապատիվ Հ. Խաչիկ ծ. վ. Դադյան

Մեծարգո հայր սուրբ!

Այս աշնան պրոֆ. Ստչիգովսկու[1] հետ Էջմիածին գտնված ժամանակ Ձեր տված սիրալիր խոստումը՝ Նղվարդի տաճարի մեծ արձանագրության մի պատճեն ինձ հանձնել, այդ եկեղեցու շինության ժամանակը որոշելու համար, վրստահություն է տալիս ինձ դիմելու Ձեզ այժմ, խնդրելով՝ միջնորդել պ. Բասմաճյանի[2] առջև, որ նա իր մոտ գտնված արձանագրության մի ընդօրինակությունն ինձ ուղարկի։ Թե՛ պրոֆեսորը և թե՛ ես չափազանց պարտական կլինենք Ձեզ, եթե Դուք գրեք այդ մասին պ. Բասմաճյանին, կամ գրավոր մի հանձնարարություն տաք ինձ, հիշյալ պարոնին անձամբ դիմելու համար, որ ավելի լավ կլինի թերևս։

Նույն այդ ժամանակ Դուք հայտնել էիք՝ Հովհան կաթողիկոսի հունարեն մի արձանագրության մասին։ Արդյոք չե՞ք կարող որևէ մի տեղեկություն տալ դրա մասին։

Մի փոքրիկ հարց ևս. որտեղի՞ց կարելի է ձեռք բերել Դվինի մոզաիքների լուսանկարները, որոնց մասին հիշվում է Ձեր զեկուցման մեջ «Արարատում» (Դվինի և Գառնիի պեղումները). այդ լուսանկարները ցանկանում է ձեռք բերել պրոֆեսորը։

Պրոֆ. Ստչիգովսկին և մենք՝ նրա ուղեկիցներս, զբաղված ենք այժմ մեր ճամբորդության նյութերի վերամշակությամբ։

Ներողություն եմ խնդրում, մեծարգո հայր սուրբ, իմ պատճառած փոքրիկ նեղության համար և կանխավ շնորհակալություն եմ հայտնում Ձեզ։

Պրոֆեսորը խնդրում է բարևել Ձեզ։

Ընդունեցեք խորին հարգանքներս՝ միշտ պատրաստ Ձեզ օգտավետ լինելու՝

Լևոն Լիսիցյան[3]

Հասցեն՝ Leon Lissizian, Виена—Австрия
Vien I, Franzensring 22,
Kunsthistorisches Institut

Թղթ. 257, էջ 4—5

8

13 փետրվարի, 1914 թ.
Բաքու

Զվարթափայլ հայր Խաչիկ
Զվարթնոց[1],

Այստեղ իմացա, թե լրագիրներում մի քիչ կծել են քեզ, բայց չեմ կարծում, թե զվարթաշող եռեսդ մազի չափ իսկ ծամածռված լինի խմբագիրների կամ թղթակիցների տափակ ասամների ղրաշարժ խածումներից։ Այդ ամեն գրաբանությունները կթաղվեն մոռացվող թերթի թիվերի հետ։ Զվարթնոց Խաչիկի հետ ապրող աշխարհական ու նաև եկեղեցական ժամանակակիցները մոռացության կմատնվեն ապագա սերունդից, մինչդեռ Զվարթնոց հրաշափառ ավերակները, որքան ժամանակ որ շարունակեն գոյություն ունենալ ի տես մարդկան[ց], իրենց վրա բարձրացրած պիտի պահեն Խաչիկ վարդապետի անունը իբր վեհածածան խաչն, որ յուր տոկունությամբ և ջանասիրությամբը դեռնի տակից լույս աշխարհ հանեց իրենց՝ այդ ավերակներին։

Գրեթե մի շաբաթից ի վեր այստեղ եմ։ Այդ կողմերը գալու միտք [ունիմ], և եթե Աստված հաջողի, մի 9—10 օրից կլինեմ այդտեղ։

Ողջույններ Բաբգեն հայր սուրբին, ինչպես նաև ուրիշ հարցանողաց։

Հիշյա զիս ի մաքրափայլ հաղորթոսքդ
Պետրոս Տոնապետյան[2]

Խդր. 266

9

22—25 դեկտեմբերի, 1920 թ.
Վաղարշապատ

ԶՎԱՐԹՆՈՑ

ՀԽՍՀ

Լուսավորության ժողկոմի հրաման[ի] համաձայն, ես ընդունեցի Զվարթնոցի վանահայր Խաչիկ ծ. վրդից զանազան պատմահնագիտական նյութեր։

Մեր պատմության և գիտության այս նոր դարաշրջանը բացող վայրկյանին՝ ես իբրև էջմիածնի նախկին վանական, բոլոր կուլտուր-կրթական հիմնարկությունների կոմիսար, եկել էի Խաչիկ ծ. վրդի մոտ առաջարկելու, որ իր ունեցած՝ երկար տարիների ընթացքում անուրանալի տոկունությամբ ժողոված գիտական այդ նյութերը, որոնք խոշոր ընդհանուր նշանակություն ունեն և պիտի մտցվեն այսուհետև պետական գիտական գանձարանը, նա հանձնե ինձ պետականացնելու համար։

Մեր հնությունների այդ հին սիրողը առանց տատանվելու ընդառաջ գնաց իմ առաջարկին և այն պատրաստականությունը, որ նա երևան բերեց, պասիվ է բերում անշուշտ Զվարթնոցի սլեղիչ վանահորը։

Գիտության մատենադարանին ու թանգարանին հանձնելով այն, ինչ որ մինչև այժմ անձնական սեփականության արժեքն ուներ, նա դրանով գիտության և ընդհանրության առջև կատարած վաստակի ու պարտքի գիտակցությունն է ունենալու։ Մի զգացմունք, որին ոչինչ չի կարող փոխարինել մի մարդու համար, որը իր հետևից ունի ապրած ու աշխատած երկար տարիների մի շարան։

Լևոն Լիսիցյան

Խդր. 371, էջ 6

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Եղիշե Մադաթյան (1865—1918)—բանաստեղծ, գրականագետ, մանկավարժ։ Ավարտել է Մոսկվայի համալսարանը։ Եղել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչ, դաստիարակել է Ներսիսյան դպրոցում, Գևորգյան ճեմարանում։ Աշխատակցել է ժամանակի հայկական մամուլին («Մուրճ», «Արարատ»)։ Գրել է ուսումնասիրություն Փ. Բուդանդի մասին («Փավստոս Բուզանդ», Վիեննա, 1902)։

2. Գր. Խալաթյանց—Գրիգոր Խալաթյանց (1858—1912)։

2

1. Խոսքը Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1710—1780) մասին է։
2. Արսեն Կրասիլնիկյան—մշակութային գործիչ, «Մուրճի» խմբագիր (1901—1902)։
3. Գյուտ քահանա Աղանյան (Տեր-Առաքելյան Հարությունն, 1856—1920)։

3

1. Խոսքը Զվարթնոցի մասին է։ Խաչիկ Դաղյանին է պատկանում Զվարթնոցի տեղի հայտնագործությունը։

2. Օսայի սարկավագ—Էջմիածնի միաբանության անդամ, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ։

3. Վ. Փափազյան—Վրթանես Փափազյան (1866—1920)։ Նրա նշած ժողովածուն՝ «Վտակը», նվիրված Գր. Ջանշյանի հիշատակին, լույս է տեսել 1901 թ., Թիֆլիսում։ «Վտակում» զետեղված Զվարթնոցի մասին հաղորդումը գրել է Կ. Բասմաջյանը։

4. Միքայել վարդապետ—Անիի ս. Գրիգոր եկեղեցու վանահայր։

4

1. Միքայել Միքայելյան (1879—1943)—քանդակագործ, սովորել է Պետերբուրգում, ապա կատարելագործվել Հռոմում։ 1903 թ. ապրել և աշխատել է Թիֆլիսում։ Քանդակել է Լենինի կիսանդրին, հայ մշակույթի նշանավոր գործիչների դիմաքանդակները և այլն։

5

1. Լեհման—Հաուպտ Կաուլ (1861—1938)—գերմանացի արևելագետ, ուրարտագետ, հայագետ։ Պեղումներ է կատարել Արևմտյան Հայաստանում, Միջագետքում։ Հրատարակել է ուրարտական արձանագրությունների իր ժամանակի համար լիակատար ժողովածու։ Ունի երկհատոր աշխատություն՝ նվիրված Հայաստանի պատմությանը։

2. Հակոբ Թոփճյան (1876—194?)—հասարակական, մշակութային գործիչ։ Սովորել է Գևորգյան ճեմարանում, իսկ 1899—1904 թթ.՝ Հալլեի համալսարանում։ Աշխատակցել է «Արարատին», «Բյուզանդիոնին» և այլ պարբերականների։ Կազմել ու հրատարակել է Խաչիկ վարդապետի՝ Արցախից բերած հավաքածուի ցուցակը երկու մասով։ Ունի տպագիր աշխատություններ հայոց պատմության և հայ վանականության մասին։

6

1. Խոսքը, հավանաբար, ռուս հնագետ, արևելագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Նիկոլայ Իվանովիչ Վեսելովսկու (1848—1918) մասին է։ Հայտնի է կուրդանների պեղումներով. նշանավոր են նրա սկյութական Սոլոխա և Մայկոպի կուրդանների պեղումները։ Ունի մի շարք պատմահնագիտական աշխատություններ։

2. Վասիլ Միրզոյան—ինժեներ-ճարտարապետ, Երևանի նահանգական ճարտարապետ։ Կառուցել է Երևանի ձիաքարշը, գործոն մասնակցություն է ունեցել Քառասուն-աղբյուր-Երևան ջրմուղի կառուցման աշխատանքներին։

3. Ներսես Գ Տայեցի, կաթողիկոս հայոց (?—662)—հայտնի է իր ջինարարական գործունեությամբ, որի համար պատմության մեջ է մտել Շինող մականունով։ Ծնվել է Տայքի Իշիան գյուղում։ Կրթությունը ստացել է Բյուզանդիայում, ծառայել է բյուզանդական բանակում, ապա հոգևոր կոչում ընդունել և հաստատվել Տայքում։ Եղել է Տայքի եպիսկոպոս, ապա ընտրվել Հայոց կաթողիկոս։ Կոստանդ կայսեր պահանջով ընդունել է բաղկեդոնություն, հետագայում վերադարձել հայ եկեղեցու գիրկը։ Ըստ Հ. Դրասխանակերտցու, Ներսեսի աճյունն ամփոփված է եղել Զվարթնոցի մոտ, իր իսկ կողմից «հորինված» շիրիմի մեջ։

4. Կարապետ վարդապետ, Տեր-Մկրտչյան Կարապետ (1866—1915)—հայագետ, հայ եկեղեցու պատմության մասնագետ։ Եղել է «Արարատ» ամսագրի խմբագիր, Գևորգյան ճեմարանի տեսուչ։ Հեղինակ է մի շարք պատմագիտական, կրոնական աշխատությունների։

5. Մեսրոպ Տեր-Մովսիսյան (Մագիստրոս, 1864—1939)—պատմաբան, բանասեր, հասարակական գործիչ։ Ավարտել է Դորպատի համալսարանը. Պետերբուրգի համալսարանում մագիստրոսական աստիճան է ստացել „История перевода библии на армянский язык" աշխատության համար, որը տպագրվել է 1902 թ.։ Ունի մի շարք հետազոտություններ հայ ժողովրդի պատմության, մշակույթի վերաբերյալ։ Զվարթնոցի մասին նրա ուսումնասիրությունը լույս է տեսել սկզբում ռուսերեն „Раскопки церкови св. Григория близ Эчмиадзина" վերնագրով („Известия Императорской археологической комиссии", вып. VII, СПб., 1903) և ապա փոփոխված ու լրացված՝ իբրև մի մասն «Էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիներ» ուսումնասիրության («Ազգագրական հանդես», գ. 15, 16, Թիֆլիս, 1907)։

7

1. Յուզեֆ Ստրիժկովսկի (1862—1941)—ավստրիացի արվեստաբան, ճարտարապետ։ Մի քանի անգամ եղել է Հայաստանում։ Ունի հետազոտություններ հայ ճարտարապետության վերաբերյալ։

2. Կարապետ Բասմաջյան (1864—1942)—բանասեր, պատմաբան, արևելագետ-հայագետ։ Խմբագիր-հրատարակիչ «Բանասեր» ամսագրի (Փարիզ, 1899—1908)։

3. Լևոն Լիսիցյան (1892—1921)—ճարտարապետ, հասարակական գործիչ։ Սովորել է Մոսկվայի և ապա Վիեննայի համալսարանում։ Համագործակցել է պրոֆ. Ստրիժկովսկու հետ հայկական ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում։ Սովետական կարգերի հաստատումից հետո նշանակվել է Էջմիածնի վանքի մշակութային արժեքների ապգայնացման գոմիսար։ Զոհվել է Փետրվարյան խռովության օրերին։

8

1. Զվարթնոց—Խալիկ Դաղյանի մականունը։

2. Պետրոս Տոնապետյան—արևմտահայ հասարակական, մշակութային գործիչ։ Ունի տպագիր աշխատություններ («Արմենիա Լինչիա», Լոնդոն 1902, «Ձայն տառապելոց», 1915—1913, Փարիզ, 1922 և այլն)։